

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35րդ ՏԱՐԻ

1886 ՅՈՒԼԻՍ 12

ԹԻԻ 3830

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 12 ՅՈՒԼԻՍ



ԱՆՇԵՏԱՑԱԾ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ

ՄԱՍՆ Ա.

ՍԵՂՐԱՔ

(Շար. նախորդ թուէն)

Սեղրաքի կրօնական համոզումները կարի սահմանափակ էին. քրիստոնէութիւնն յարգելով հանդերձ գերագոյն էակի մը գոյութեան հաւատալէն անդին անցած չէր երբէք: Մահուան ճգնաժամին մէջ անոր յուշաբերած վայրկեանին ուղեր էին իր մտցած պարտականութիւններն յիշեցնել ու բարեփոխող պանդուխտ քահանայ մը յանձն առեր էր այս դժուարին պաշտօնը: Սեղրաք բացարձակ կերպով մերժեց ամէն աղերս ու խրատ: «Աս խղճի և սկզբունքի տէր մարդ եմ, ըսաւ քրիստոնէութեան այս համետուներկայացուցչին, ու կեղծիք չեմ ընդունիր մահուան անկողնոյս մէջ:»

Քահանայն չի պնդեց, Սեղրաքի անկեղծութիւնը պինքն համոզեց ու չուղեց բռնանալ անոր խղճմտանքին վրայ. ասի այն բարի անձերէն մին էր որոնց մօտ պարզամտութիւնն ուղղութեան եւ առաքինութեան լաւագոյն առաջնորդն եղած է: Իրմէ աւելի դիտուն կրօնաւոր մը ինքզինքը թերացած պիտի նկատէր Սեղրաքի վրայ բըռ-

նութիւն ու ճնշում չի գործածելուն. այս պանդուխտ երէցն այնպէս չի նկատեց եւ շատ կը վախնամ որ քիչ մ'աւելի խօսքով երէցն ինքն ալ չի համոզուէր Սեղրաքի գաղափարներուն:

Որչուեցաւ ուրեմն որ գաղտնի պիտի մնար հիւանդին հաղորդութիւն չ'առնելն: Քահանայն մոլեռանդ ժողովրդեան գայթակղութենէն նախամեծար համարեց այս անհրաժեշտ ստախոսութիւնը:

Բայց չը գիտցուիր թէ ի՞նչ կերպով այս ճգնաժամի գաղտնիքն Հիւանդ անոցին մէջ տարածուեցաւ. քահանային թուրքերանութիւնն էր թէ ուրիշ պատճառ մը կար որով իմացուեցաւ Սեղրաքի լուսաւորչական եկեղեցւոյ պարտականութիւնները մերժելն:

Հարազատ Լուսաւորչականներու աչքին՝ այս երիտասարդ աղապանին Պաօղ մը, Բողոքական մ'էր եւ Բողոքականէ մ'աւելի քամահրելի սրարած մը չի կայ: Արօնական խտրութիւններն՝ ազգութեան ոգիէն աւելի ուժով կ'ազդէին մեր վրայ: Ամէնքը կը յիշէին այն ահաւոր պատմութիւնն որ բողոքական հաշակաւոր ննջեցեալի մը թաղման հանդէսին հետ կապուած է: Հայոց պատմութեան սեւ ու տխուր մէկ երեսն է այդ մոլեռանդ անողորմութիւնն որ անկենդան դիակի մը դէմ կը մաքաւէր: Իր ազգային պարտականութեանց մէջ եղջերուի մը չափ սիրտ չ'ունեցող խուժան մը իր բաջութեան փորձը գերեզմանատանց ապացուցանել կը ճգնէր:

Երեսուն տարուան միջոցէ վերջը մի եւ նոյն աններող դադափարները կը տիրէին, եւ Սեղրաքի թաղումը Սամաթիայէն, Նէտի-Գուլէէն ու չըջակայներէն ժողոված ու հաւաքած էր ստորին անկիրթ ամբոխ մը,

որ հաստատ կերպով դիմադրել որոշած էր անոր Հայոց գերեզմանատան մէջ ամբիօր- ունելուն :

Հայրենաւանդ մոլեռանդութիւն մ'էր որ անեղծ պահուած էր ու առաջին առթիւ երեւան կ'եղնէր : Տիգրան միայնակ էր այդ մրիկոտ բազմութեան դէմ : Յուղարկաւորութեան հանդէսն սկսաւ անշուք ու ան- ծայն . լքեալ ու աղքատին յուղարկաւորու- թիւն մ'էր . քահանայ մը, ժամկոչ մը, հին- ցած ու պատառուն ծածկոց մը, ասոնք միայն կրնային առ առաւելն ձրի տրուիլ : Ուրիշ բան էր, եթէ թաւիչէ ծածկոյթի, անտուկի մը (այսպէս կ'անուանի եկեղեցւոյ լեզուով նոր դադաղն) եւ բազմութիւն քա- հանաներու ծախքը վճարելու դիւրութիւնն ըլլար . Տիգրան ասոնց եւ ոչ մին ուզած էր . այդ ստորին խտրութիւնները վայն չ'էին վշտացներ եւ աւելի բարձր էր անոր ակնարկը : Հիւանդանոցի մատրան մէջ նըն- ջեցեւոյն արարողութիւնն երկար չի տեւեց ու դադաղը ճամբայ հանեցին դէպ ի գե- րեզմանատուն . . . :

Գայթակղեալ ամբօրսը կը հետեւէր դա- դաղին աւելի թշնամեոյ քան թէ յուղար- կաւորի մը ղիրքով, ու խռովեալ տրտունջ մը՝ որ քահանային աղօթքին կ'իշխէր, որոշ կերպով կ'ըսէր .

— Ձ'ենք ընդունիր, չ'ենք ընդունիր, չ'ենք ընդունիր :

Դադաղը կը տանէին չորս հուժկու երի- տասարդներ, Սեդրաքի այն թշուառ վիճա- կակիցներէն զորս ոյժի կարօտ աշխատու- թեանց մէջ, Հիւանդանոցի վարչութիւնն երբեմն կը գործածէ զանոնք բոլորովին ան- զբաղ չի թողլու համար : Անշուշտ լաւագոյն է այս անզգայ էակներուն յանձնել ննջե- ցեալ մը ի գերեզման առաջնորդելու տխուր պաշտօնը :

Նեղ ու դալարուն ճամբէ մը կը յառա- ջանային յամրաքայլ : Բնութեան ակէնէն ա- ւելի զմայլելի, պայծառ օրերէն մէկն էր, արեւը կ'արձկէր իր ջերմ ու ոգեւորիչ ճա- ւագայթներն, երկինքը խաղաղ էր ու ա- նամպ, ծառերը տեւեւներով կը ծածկը- ուէին, նոր կեանք, նոր հոգի մը կը ծաւա- լէր ամէն կողմ իրրեւ դառն հեգնութիւն մ'այս մահուան տեսարանին դէմ :

Այս թաղման ընդդիմացողներու ուրիշ

խումբ մը կէս ճամբան կ'սպասէր որ առաջ- նոյն հետ միանալով կը ջանար անլսելի ը- նել թաղման արարողութիւնը : Ժամկոչն իր ձայնը քահանային աղօթից կը միացնէր ա- րագ ու հապճէպ արտասանութեամբ, ինչ- սէս որ վայելուչ է աղքատին գերեզմանին, մինչդեռ խուժանը գանգատող ու բողբոջող ձայնիւ կը կրկնէր շարունակ .

— Ձ'ենք ընդունիր, չ'ենք ընդունիր, չ'ենք ընդունիր :

Տիգրան գլխիկոր կը հետեւէր դադա- ղին . այս մրկայոյզ յուղարկաւորներուն ա- զաղալը չ'էր զոր կը լսէր, քահանային սըր- տայոյզ աղօթքն էր՝ որու առջեւ կը խո- նարհէր : Ի՞նչ, այս է եղեր իւր մտերմին վախճանն, այդ գիտութիւնն ու այդ սիրտն այս տխուր վերջաւորութեան՝ վիճակեալ են եղեր . ո՞վ պիտի հաւատար մի քանի տարի առաջ երբ անխոյժ ու զուարթ ա- պագային վրայ յանդուգն ապահովութեամբ կը խորհէին :

Բայց ամբօրին աղաղակն հետզհետէ կը բարձրանար սպառնալից շեշտով մը . գե- րեզմանատունն հասեր էին . պահ մը լու- թիւն տիրեց . գիացողները չը գիտցողնե- րուն կը սպառնէին այն անլուր սրբապղծու- թիւնը . բողբոջական մը ուղղափառ Հայոց գերեզմանին մէջ ընդունուի . . . Լուսա- ւորչականներուն գերեզմանատունը մըտ- նեւն արքայութիւն մտնելէն աւելի դժուա- րին էր :

Ծայրայեղ միջոցներու դիմելէ առաջ ամ- բօրսը կը խորհրդակցէր, խռովութեան հոգմը կը տարուբերէր վայն, մինչդեռ իր խուլ և մոլեգին բողբոջ չըջակայ արձագանքներէն կրկնուելով ընդարձակ հովտին մէջ կը տա- րածուէր .

— Ձ'ենք ընդունիր, չ'ենք ընդունիր, չ'ենք ընդունիր :

Ո՞վ էր եւ ի՞նչ կ'ուզէր այս յիմար ու կատաղի բազմութիւնը : Տիգրան անոնց դարձաւ : Իր սպառնութենէն կը ճանչնար զայրացեալ խուժանի մը բոլոր ոյժն ու տը- կարութիւնը . ժամ էր վերջ տալու այս ա- մօթալից տեսարանին . դադաղը քարի մը վրայ կ'սպասէր, եւ քահանայն անօգուտ կերպով կը բանակցէր այս անզգամներուն հետ ու խօսք հասկցնել անոնց : — Ի զուր ըսաւ անոնց թէ Քրիստոսի եւ ոչ մէկ վար-

դապետութեան մէջ կը տեսնուէր այս ան-
ներող մոլեռանդութիւնը, թէ երիտասարդ
ննջեցեալը բողոքական մը չ'էր, ի դուրս գե-
րեզմանին սրբութիւնն ու մահուան նուա-
րականութիւնն յիշեցուց այս չափազանց
կրօնասիրութեան մուրեքը հոգիներուն :

Երկու հարիւր հոգւոյ չափ բազմութիւն
մը կը շրջապատէր միմիայն փոսն՝ ուր Սեդրաքի
մարմինը պիտի ամփոփուէր, եւ քահանային
տկար ձայնը շուտով կը կորսուէր ահաւոր
ու վայրենի մռնչման տակ որ երկու հարիւր
բերնէ արձակուելով, փոթորկաշունչ հողմի
մը պէս կը սաւառնէր :

— Ձեռք ընդունիր, չ'եռք ընդունիր,
չ'եռք ընդունիր :

Երբէք անկրթութիւնն այս աստիճան
վայրենի երեւոյթ մը չ'էր ստացած. ափ-
սոս, մի եւ նոյն անաստ ու կամակոր խու-
ժանն էր զոր ինքն այնքան անդամ բորբո-
քած ու արձակած էր ազգային իշխանու-
թեանց դէմ, ինչպէս թնդանօթ ձիւղ ըս-
պայն կ'արձակէ իւր հրատապ եւ աւերիչ
ուռմըր : Այժմ այդ մարդիկն իրեն դէմ
կ'ենէին այնքան կոշտ ու անգութ որքան
այլոց դէմ հանած էր :

Տիգրան ցասկոտ էր բնութեամբ. ո՛չ
թուոյն անհաւասարութիւնն, ո՛չ բարկալից
բազմութեան զայրոյթն ու անոր անհաշ-
ուելի հետեւանքը գինքը չի կասեցուցին :
Իր բարեկամին դիակին դէմ կուռող այս
մարդոց տեղի չի պիտի տար, թէ որ մեռ-
նիլ անգամ հարկ ըլլար. արիւնը եռաց.
Թերեւս իր պերճախօս լեզուն յաջողէր մեղ-
մել այն միւրիկը՝ զոր այնքան վարժ էր յա-
րուցանել. բայց բարկութիւնն ամէն խո-
հեմութիւն անոր մտքէն վանեց :

— Ետ քաշուեցէք, ստահակներ, գոչեց
անոնց, ես եմ այս ննջեցելոյն տէրը, չ'ըլ-
լայ որ մօտենաք անոր, ազգիներն է այս գե-
րեզմանատունն ու Հայոց ազգին մէկ զա-
ւակն է այս մեռեալն որ հոս պիտի թաղուի :
Կուռոյ հրաւէր մ'էր :

— Այդ ալ բռնօթեմք մ'է, աղաղա-
կեցին ումանք, տփեցէք այդ անհաւատը :

Խուժանը կատաղած՝ ամեհի ու բարբա-
րոս մռնչմամբ կը պատէր երիտասարդ,
որպէս փոթորկայայտ կոհակներ կը շրջապա-
տեն ընկղմելու մօտ նաւն. ամէնէն քա-
ջերն յառաջ նետուեցան. սլահ մը վտանգն

անխուսափելի եւ ահաւոր դարձաւ, մինչ-
դեռ հեռու մնացողները զայրագին արձա-
գանքի մը պէս կը կրկնէին. — Բռնօթեմ-
ք մ'է, բռնօթեմք մ'է, զարկէք :

Անդգամ մը աչերն արիւնով լեցուած
ձեւքը վերցուց . . . :

Սարսափելի հայհոյութիւններով խառն
որոտման պէս ձայն մը լսուեցաւ յանկարծ.
Երկու մարդ, ոչ նուազ չարաշուք ու ստո-
րին երեւոյթով քան միւսներն, անհաւա-
տալի ուժով մը այդ մարդկային պատենէն
ձեղքելով երիտասարդին քով սրացան ու
պոռացին .

— Մի՛ դպիք մեր էջէնտիկն :

Պահ մը վարանում տրեց :

Կ'երեւէր թէ այս երկու մարդիկն ան-
ծանօթ չ'էին. բաց դուխնին՝ թեթեւ եաղ-
ճայով մը պատած, կուրծքերնին մերկ՝ զոր
չի կոճկուած պզտի բաճկոնակ մը բաց կը
թողուր շարունակ, ոտքերնին բոպիկ այն
ծանօթ կօշիկներու մէջէն որք իրենց յա-
տուկ անուամբ էէֆէ կը կոչուին, այս մար-
դիկը կը վերաբերէին այն ստորին դասուն
որ պարագային համեմատ ձկնորս, նաւա-
վար ու ջրհանակիր կ'ըլլայ եւ որ սովորա-
բար քիչ կամ շատ ոճրագործ է :

Պարտէին այս երկու անձները մեծ համ-
բաւի մը և իշխանութեան տէր լինիլ, (համ-
բաւ՝ որ գովելի տեղ մը չ'էր կրնար ունե-
նալ) ըստ որում ամբոխն իր յարձակման
մէջ կանգ առաւ : Յետոյ այս մարդիկն հե-
տըզհետէ հեռացուցին երիտասարդը մօտէն
չըմպատողներն ու կամաց ձայնով, տարօ-
րինակ հեզութեամբ մը՝ որոյ ներքեւ դա-
շոյնի հարուածի մ'սպառնալիքը դիւրու-
թեամբ կը նշարուէր, մի առ մի վանեցին
այս սպառնալից բազմութիւնն :

Ի դէպ էր անշուշտ այս անյուսալի օգ-
նութիւնն՝ որ յամառ երիտասարդը կը
փրկէր :

Տիգրան գէշ երազէ մը սթափիլ կարծեց
երբ իւր շուրջն այս երկու ազատիչները մի-
այն տեսաւ՝ զորս չ'էր ճանչեր եւ որոց իր
չնորհակալութիւնն յայտնեց :

— Դուք կրկին բարեգործութիւն մ'ը-
րիք, ըսաւ անոնց, նախ արդիւնցիք որ նըն-
ջեցեալ մը անդերեզման թողուն եւ զիս
սպաննեն, երկրորդ՝ թող չի տուիք որ այդ-
քան մարդիկ սրբապիղծ ու ոճրագործ լինին :

— Ես ձկնորս Կարապետին եղբայրն եմ, ըսաւ անոնցմէ մին, դուն իմ եղբայրս մահ ուանէ ու րանտարկութենէ փրկեցիր առանց ստակ եւ վարձք պահանջելու: Դուն զիս չ'ես ճանչնար, բայց մենք քեզ լաւ կը յիշենք, երբ դատաստանին մէջ իմ եղբայրս կը պաշտպանէիր ու փրկեցիր: մենք աղքատ մարդիկ ենք, ապերախտ չ'ենք, ըսաւ խոնարհութեամբ ու հեռացաւ իր ընկերոջ հետ մինակ թողլով սգաւոր երիտասարդն իր մտերմին գերեզմանին քով:

Պալքըլլի գերեզմանատունը Պոլսոյ Հայոց գերեզմանատանց երէցն ու հինաւորցն է. չի կայ մէկն որ ազգական մի յանձնած չը լինի այդ սեւ հողին. այս գերեզմանատունը սովորական բան մը չ'է, այլ չարագուշակ քաղաք մը՝ որ իրեն տնակները, պալատներն, արուարձաններն, իր յարդի ու անյարգ թաղերն, իր սովորութիւններն, աւանդութիւններն ու նախապաշարումներն ունի. երեւակայեցէք ընդարձակ դաշտ մը երբեմն կտորած, սեւցած ու տձեւ քարերով, երբեմն հոյակապ շիրիմներով ծածկուած, ոչ իսկ մատ մը տեղ ուր ոսկերոտիք դրաւած չը լինին, նսեմաստուեր ու անխնամ վայրերի ծառեր որք աստ անդ կը տարածեն ոչ թէ շուք, այլ կարծես անթափանց մառախուղ մը. ոչ ճամբայ եւ ոչ ուղի առաջնորդուելու այս մեռելոց լաբիւրինթոսին մէջ ուր գերեզման մը գտնել շատ անգամ դժուարին ու երբեմն անհնարին է. ու հարկ է, եթէ պէտք ունիս համոյր մը տալու սիրեցեալ հողակոյտի մը, հարկ է գիմել գերեզմանաց պահպանին, միակ իշխանն ու միակ հպատակն այս ոսկերոտեաց աշխարհին մէջ:

Միւս թաղերու գերեզմանատուներն ո'չ այնքան սղատխուր երեւոյթ մ'ունին. այդ նոր շիրմաստաններն հետզհետէ փոխլուելու ու շտկուելու վրայ են. անհաւրադատ զաւակներ, ուր լուսաւորութեան անուան տակ ամէն ինչ կը նորոգի մինչդեռ անոնց ծերունի հաւը, Պալքըլլի գերեզմանոցն, անսասան կը կենայ ու աւանդապահ անգղի մը պէս անշարժ կը հսկէ իր մեռելոց վրայ:

Սեղրաքի մարմինն այս գերեզմանոցին մէջ թաղեցին. այնպէս փափաքեք էր որ-

հասական երիտասարդը. քոյր մը ունի եղեր իրմէ առաջ մեռած, անոր քով ամփոփեցին զինքը: Տիգրան բար մը դնել տուեր էր անոր վրայ ու փորրիկ երկաթէ վանդակ մը այս կրկին գերեզմաններուն շուրջն: Երկաթէ վանդակ մը նմանը չի տեսնուած նորածեւութիւն մ'էր որ անուր մաքառումներէ վերջը միայն կրցաւ ներմուծուիլ:

Սեղրաքը ծածկող քարին վրայ ոչ անուն կայ եւ ոչ թուական, այլ երեք բառ միայն կը կարդացուի որ մինչեւ այսօր բոլոր այցելուներուն հետաքրքրութիւնը կը շարժէ: «Հանդիստ թողուցէք զինքը» գրուած է այս մարմարին վրայ. որով կ'ողջուի այս տարօրինակ պատուէրն, ով ննջեցելոյն հանգիստը կրնայ խռովել արգեօք:

Անոնք որ փափաքած են խմանալ այս անանուն ննջեցելոյն գաղտնիքն, ի զուր պահապանին դիմած են տեղեկութիւն ու գելու համար. պահապանն իր հսկողութեան յանձնուած մեռելոց նման լուռ էր այս մասին: Միայն դիտեր էին ունոնք որ սեւեր հագած մանկամարդ կին մը ամէն տարի Մայիսի առաջին կիրակի օրը պսակ մը կը բերէր այս լքեալ գերեզմանին: Պսակ մը Պալքըլլի մէջ հազուադիւրս գէտ մ'է. հետաքրքիրները յուսոյ նշոյլ մ'առին. կինը միշտ ճշդապահ կը գտնուէր. հետեւեցան անոր ու երբ օր մը սեւերով կինը գերեզմանէն կը վերադառնար, ետեւէն գացին անոր ով ըլլալն հասկնալու համար. բայց տեսան որ տան երկծի կառք մը իր վարագոյրներն իջեցուցած սրարչաւ կը տանէր սգաւոր այցելուհին. այն ատեն դարձան գերեզմանին քով գոնէ պսակին ձեւէ, ծաղիկներուն կապուելուն ճաշակէն ո'ւսկից գալը գուշակելու համար: Պսակը ճերմակ բամբակներով շինուած էր, որուն վրայ կապոյտ մանիշակներով կալմուած «զղում» բառը կը կարդացուէր:

Մ Ս Ս Ի Ս.

Մ Ո Ռ Ա Յ Ո Ւ Մ.

Յունիս ամսոյ մէջ պայծառ ու անդորր գիշեր մը, Քանըճայի ծովեզերեայ ապա-

բանքներէն մին չքեղ կերպիւ լուսաւորուած էր . Պետական Խորհրդոյ Հայազգի անդամներէն և Մատրիտի Օսմանեան դեսպանատան նախկին առաջին քարտուղար Վսեմ . Գէորգ էֆէնտի երեկոյթ մը կ'ընծայէր իր ընտրեալ հրաւիրելոյ . դեսպանական մարմինը գրեթէ ամբողջովին , Պետական Խորհրդոյ նախագահը , բարձրագիւր իսլամ ու հայազգի պաշտօնատարը եւ սեղանաւորը իրենց ընտանեաց հետ պատասխանած են հայ քաղաքագէտին ընդունելութեան :

Սրահներէն մին՝ միայն լուրջ ու քաղաքական խօսակցութեանց յատկացած է : Ռուսո - թուրք պատերազմին նախընթաց եզոյ Պալքանեստն-ազգաց խռովութիւնք մը տատանջութիւն կը տարածեն դիւանագիտաց մէջ , խլրտում մը կայ , ծով մը՝ որ կռահակածուի կը յուզէ սլաւեան ազգութիւններն ու սրատես անձինք դիւրաւ կը ճանչնան հիւսիսի քամին որ փոթորիկ միայն կը ծնանի :

Ուրիշ ակումբ մը երիտասարդաց , որոց մէջ կը նմարուին դեսպանական փայլուն քարտուղարք , զինուորական կցորդներ , դատական պաշտօնատարներ , տիկնանց շուրջն հաւաքուած է : Անդին խաղի սրահը թափուր չէ ու պառաւն իր անխուսափելի տագնապով կը վարակէ իր բոլոր սիրահարները . մէծիւններով սկսեր էին , շուտով գրաւներն ոսկւոյ կը վերածին ու մեծ գուլմարներ կը շահուին ու կը կորսուին :

Տիկնանց քով ընդհանուր խօսակցութեան նիւթը՝ մեծ ընտանիքի վերաբերով յոյն տիկնոջ մը իր ամուսինը թունաւորելու ոճրով ամբաստանութիւնն էր , որ նոյն օրն իսկ անմեղութեան վճռով մը վերջացեր էր :

Ամէնքն ընդհանրապէս կը քննադատէին երիտասարդ փաստաբան մը որ ներկայ էր հոն ու բառ մը չէր արտասաներ այս յարձակմանց դէմ . իր տաղանդը չարաչար գործածելուն մասին եղած դիտողութեանց դէմ ժպտով մը կը բաւականանար , ու լուռ , ժպտուն ու տխուր կը կանգնէր անշարժ վառարանին մարմարին կրթնած :

Այս երիտասարդ լռակեացն , որոյ պերճախօսութիւնը կ'ամբաստանէին , Տիգրանն էր : Չորս տարի անցեր էր յորմէ հետէ սիրով , գրեթէ մոլութեամբ ընդգրկելով փաստաբանական ասպարէզն , հոն գտեր էր մի-

այն այն մշտատեւ պայքարն որ իր դիւրա-յոյց ու մշտադրգիւ հոգւոյն անհրաժեշտ էր : Իր խորին ու լուրջ հետաքննութիւնը , խիստ ու անաչառ դատողութիւնն , հզոր ու հըպարտ չեղտը , պերճ ու զարդարուն լեզուն շուտով մեծ անուն ու մեծ համբաւ տուեր էին անոր : Բաղդատաբար քիչ միջոցի մէջ յաջողեր էր ձեռք բերել բարձր դիրք մը որ այս դժնդակ ասպարիզին մէջ հազուագիւտ է :

Շատեր յուսահատ ետ քաշուած են եւ այս մշտատեւ կռուոյ կեանքն ամէն արարածի ուժին չի համապատասխաներ : Տիգրանն ընդհակառակն իր միջոցաւ գտեր էր հոն , այս էր այն ասպարէզն զոր երեւակայներ էր միայն յարմար իր անհանդարտ ու դժգոհ ոգւոյն ու հոն իշխող ու հզոր ձայն մը վաստկեր էր մինչեւ իսկ այն բազմաթիւ թշնամեաց քով զորս ընկճելով ու յաղթելով ստացեր էր :

Հարկ էր գոհանալ այս յաջողութենէն որ կոյր բազդի մը շնորհը չէր եւ որ դատական յաղթանակներով ձեռք բերուած էր :

Տիգրան՝ մասնաւորապէս պատժական դատերու մէջ անվիճելի իշխանութիւն մը ստացած էր . իւր հրաշքները մէկէ աւելի էին . կեղդոնական բանտին հիւրերէն որ մէկն իրենց կեանքն , ո՛ր մէկն իրենց ազատութիւնը կը պարտէին անոր : Անոր անունը վերջին ապաւէնն էր որուն ամբաստանեալն անհաւատալի վստահութեամբ կ'ապստամանէր : Այդ անունն բանտին մէջ նուիրական էր , անոր մասն ամենամիտքիկ չարախօսութիւն ամենամեծ ոճիր մ'էր եւ երախտագիտութիւնն այն միակ մնացորդն էր զոր չարւոյ ու բարւոյ զգացում կորսնցնող այս մեծ սճրագործները դեռ կը պահէին իրենց սրտին մէջ :

Օր մը նորատի կին մը բերին հոն որ իր էրիկը թունաւորած լինելու ամբաստանութեան ներքեւ կը գտնուէր :

Կանանց յատուկ բանտը փոխադրուելէ առաջ առժամեայ կերպիւ առաջնորդեցին զինքն ընդարձակ , խոնաւ ու մթին սրահի մը մէջ , տխուր ու մահազգեցիկ օթեւան , ուր տարաբաղդ կինը մաղ մնաց վախէն պիտի մեռնէր : Իրեն քանտարկութեան ընկեր ունէր ամբաստանեալներ ու դատապարտեալներ . ահաւոր տեսարան մ'էր այս եր-

կաթներով ծանրաբեռնեալ աւազակներու խումբն որոց ամէն մէկ շարժումը չլիցայից շառաչմամբ կը կրկնուէր, որ մէկն անխոյժ, զուարթ ու կայտառ, որ մէկը տոգոյն, նիւհար ու դողդոջուն այս մահուան կապանքներուն տակ: Հոս պատանի ու գեղանի մարդասպան մ'էր որ ութսունամեայ ծերունի մը սպաննած էր ու անոր ցոյց տըռած տարօրինակ դիմադրութիւնը զարմանօք կը յիշէր. հոն՝ երկար մօրութեով, վարդապետի դէմքով դրամահենք մը, որ իրեն արուած պատժոյն ծանրութեանը դէմ կը բողբէր. անդին՝ աներկիւղ հրծիգ մը որ ապահովագրութեան ընկերութեանէն երկու հարիւր ոսկի կորզելու համար ամբողջ թաղ մը կրակի տալու չէր վարանած. քիչ մը անդին երեք չորս անձինք՝ ծանօթներ ու մտերիմներ, որք միատեղ ապրելով բարեկամացած են եւ որք ապագայի պատրաստութիւններով ու արդարութեան ձեռքը չի մատնուելու համար նորանոր միջոցներ մտածելով կ'զբաղին. ասոնց մօտ ծերունի մը՝ որ պատժական դատարաններէ ստացած բազմաթիւ դատաւարտութեանց չընորհիւ անվորձ իրաւագէտէ մ'աւելի պատժական օրէնսդրութիւնը կը ճանչնայ. զորօրինակ նա կը բացատրէ նորեկներուն թէ դատաստանին կողմէ ձրի փաստաբան մը պիտի ունենան, թէ ուրանալէ լաւագոյն պաշտպանութեան միջոց չ'ունին, թէ քննիչ գատաւորին բռնութեանէն դանդաղել հարկ է գատարանին առջեւ:

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ
(Շարունակելի)

ՆՈՐՈՒՄԱՆ ԱՆՆ

ՀԱՍԵՐԱՅԵՈՒԹԵԱՆ ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ

ՏԱՆ ԵՒ ԴՊՐՈՑԻ ՄԻՋԵՒ

Որչափ բրբրուին բնութեան գաղտնիքներն, նոյնչափ երեւան կ'ելնեն նիւթեր՝ ենթարկուելու իմաստասէրների հայեացքներին: Որչափ խոր լինին այս հայեացքներն,

նոյնչափ անվրէպ տրամաբանութեան կը յանգինք: Մարդկային պատմութեան մէջ դեռ ո՞րչափ գաղտնիքներ կան, որք պէտք են զոհուելու հետաքրքիրների հայեացքներին, Վիքթոր Հիւկոյի մէկ հայեացքն՝ յեղաշրջեց դրեթէ ամբողջ մարդկային ընկերութիւնն եւ դուրս թափեց անհուն գաղտնիքներ: Ո՞վ կրնայ ըսել թէ երկրագնդին Մեծ բանաստեղծին ծնուելը օգտակար չ'էր մարդկութեան համար, եւ ո՞վ կը յաւակնի ըսել թէ, մահն ինչո՞ւ խիստ չուտով չը խորտակեց նորա հզոր գրիչն:

Միթէ Պետալոծծին ալ նոյնչափ չը գընահատուեցա՞ւ, իրեն վերագրուած գաղտնիքն — մանկավարժութիւնն դուրս հանելով, որը նոյնպէս որչափ հետաքրքրուի, նոյնչափ նիւթ դուրս կը տայ: Անհուն երախտագիտութիւն իւր անմահ յիշատակին:

Անցինք այժմ մեր բուն նիւթին, Նիւթը՝ նոյնչափ կնճապից որչափ տրամաբանական՝ գուցէ բնաւ առարկայ եղած չէ մանկավարժական խորհրդածութիւնների, Լատինքեան փաստաբեր կնճիւ մ'է այս, որը մեծ հարուած տուած է մանկավարժական սխալէմին: Համերաշխութիւն, ի՞նչ մեծ իրողութիւն, որ եթէ մարդկային սեռի ամեն շրջանակներին մէջ ալ միօրինակ իրադրութիւն, անսահման հրաշքները պիտի գործէր: Համերաշխութեան բացակայութիւն, ի՞նչ տխուր իրողութիւն, որ գրեթէ անվրէպ իրադրութեան ընտանեկան, կրթական եւ ընկերական ամեն շրջանակների մէջ ալ, միշտ տխուր երեւոյթներ առաջ կը բերէ:

Բարոյական այս հոսանք, որուն առաջն առնուլ շատ քիչ կը խորհուի, հետզհետէ դէպի անկում կը մղէ մարդկային ընկերականութեան այն շատ քիչ ներդաշնակութիւն, որը ազդուապէս կը ծեծուի այսօր դիւանագիտական եւ զանազան կարգի աղմբոց կռուանին վրայ:

Շատ չը շեղինք մեր գիծէն: Քանիցս խօսած լինելով մանուկ-էակների հոգեկան, բարոյական եւ մարմնական ինքնաձեւ գործունէութիւնների վրայ, տալիս ունեցած եմք ապացուցանելու թէ, երբ մանուկներ գերծ կը լինին կրթական ձեւակերպութիւններէ, ազատ արշաւներ կը

գործ են բնութեան այլ և այլ երեւոյթների մէջ, մեծ հրապոյր կ'ունենան, իրենց մշտային զարգացում անհամեմատապէս կ'աճի, ճշմարիտ ընկերութեան զուտ ներշնչումներ կ'արտայայտեն, ընտանեկան բարեկեցութեան եւ երջանկութեան օրինակելի աղբարներ կը հանգիստանան, լաւ կ'ուսանին, շուտ կը հմտանան, եւ իրենց հոգին բազմաբանակ օգտակար մտապատկերներով կը լնուին:

Սակայն միտային միւս երեսն երբ նայինք, բացորոշապէս պիտի տեսնենք որ կրթական ձեւակերպութիւն, կրթական բռնապետութիւն, տան եւ դպրոցի միջեւ համերաշխութեան բացակայութիւն, ինչպէս նաեւ կրթութեան ինքնակոչ առաջնորդների տգիտութիւն եւ անտարբերութիւն, ասոնք ամենքը բարոյական անօրինակ թշուառութիւնների կ'ենթարկեն մանուկների հոգեկան, բարոյական եւ մարմնական ինքնաձեւն գործունէութիւններն: Ասոնց մէջ միշտ մեծ աղէտների ծնունդ կը տայ մանաւանդ համերաշխութեան բացակայութիւնն տան եւ դպրոցի միջեւ: Մանուկների կրթութեան հիմնաքարն միմայն տան եւ դպրոցի կրթական գծերի միօրինակութիւնն լինելով, մենք կ'սկսինք մատնանիչ անել այն անհուն խտիր որ կայ կրթութեան այդ երկու եզրերին (տուն, դպրոց) միջեւ: Մեր հայեացքներն՝ բացառութիւնների վերաբերութեամբ չը լինելով, կը ցուցնեմք թէ Տաճկահայերի տնական եւ դպրոցական կրթութեան սխալ էմներն այնչափ խիստ աննմանութիւն ունին իրարու հետ, որ գրեթէ անհնարին է մի որ եւ իցէ առընչութիւն հաստատել երկուքին մէջ առանց մէկ եւ միւսն քանդելու: Տուն եւ դպրոց, մանուկների ինքնագործունէութեան զուգահեռական կոուաններն, մեր այժմու ունեցած կրթութեան անյատակ գահալէժին վրայ, այն երկու հակադիր եզրեր դարձեր են այսօր մեր մէջ, որ թէ՛ մէկն եւ թէ՛ միւսն կ'շտապեն կրթութեան անմեղ «զոհերն» շուտով նոյն գահալէժին մէջ գլորելու: Ասոր համար է որ այսօրինակ զոհեր պակաս չ'են մեր մէջ: Եւ քանի որ այդ անջատ եզրերին (տուն և դպրոց) ուղղութիւններն իրարու հակադիր կենան, նոյնչափ շատ պիտի լինին զոհերն: Բայց և

այնպէս մանկավարժական կրթութեան այս զիջասաբեր հակացոյցն՝ անթիւ զոհեր ընելէ կը դադրի միայն այն ժամանակ, երբ տան եւ դպրոցի մէջ համերաշխութիւն կը հաստատենք:

Գրեթէ հանապազօրեայ իրողութիւն մ'է թէ, ինչ որ տուն կը պահանջէ, դպրոց կը մերժէ: ասոր հակառակն, ինչ որ դպրոց կը հիմնէ, տուն կը քանդէ: Իրողութիւնների այս քառսին մէջ՝ երեւակայեցէք թէ մանուկ - աշակերտներ ի՞նչ գծի վրայէն կը քալեն: Պարզեք վարագոյրը: Երկու թատերաբեմեր կը բացուին մեր առջեւ՝ իրարու հակադիր երեւոյթներով: Տպաւորութիւններ՝ երկու կողմէն ալ եղբերեղական են հանգիստատեսին համար: Առաջինին վրայ կը ներկայանան մեզ մանուկներն՝ շրջապատուած իրենց ծնողներով եւ շրջակայներով: Այս վերջիններն՝ իրենց «ենթակայները» նիւթակահապէս սնուցանելու հետ կոչումն ունին նաեւ բարոյապէս սնուցանելու: Սակայն դժբաղդաբար կը խոստովանինք որ, ինչ որ ոյժի, բռնադետութեան, բիրտ վարմունքների, նախապաշարունակների, հայհոյալիք նախադիւնքների եւ մոլեռանդ սովորոյթների հետ վերաբերութիւն ունի, անոնց կարծիքով այն է մանկավարժական կրթութեան սկզբունքն: Ասոր համար է որ առանց խղճահարութեան եւ անվրէպ ի գործ կը դնեն զայնս իրենց անմեղ զոհերի վրայ: Այդ զուելշտական կրթութեան սկզբունքներէն մինն է նաեւ ծնողների աններողամտութիւնն: Հազարաւոր օրինակների մէջ կը տեսնենք որ մանուկների ամենաթեթեւ մէկ սխալն զանազան քստմնելի պատիժներով անսխալի նեղի եղած է¹⁾: Ասոր միայն մէկ օրինակն տեսնենք. — մանուկ մը, որի ինքնագործունէութիւնն առ հասարակ սխալների մէջէն կ'ընթանայ, երբ իւր ծնողների անվրէպ հրամանին վրայ կը փութայ ջուրով լի սափորը անոնց մօտեցնել, եւ երբ գլխով կ'իյնայ եւ սափորը կը խորտակուի, այն ատեն սոսկալի հայհոյանքների տարալի մ'է որ կը տեղայ խեղճին վրայ, թէպէտ դերծ

1) Ծնողների կարծիքով սխալներն պատիժով փոխարինելն ալ մանկավարժական սկզբունք մ'է:

չը մնար դանակոծութիւններէ եւ զրկումներէ :

Կը տեսնէ՞ք, ի՞նչ մեծ յոռութիւններ են ասոնք, որոց վարժուող մանուկն շատ դժուարաւ կրնայ համակերպիլ դպրոցական օտարոտի օրէնքներին : Սակայն պէտք է գիտնան մեր ծնողներն — մանուկներին ինքնակոչ կրթիչներն — որ բնութեան մէջ վնասաբեր դէպքերն՝ քիչ բացառութեամբ սովորական են : Պէտք է գիտնան որ իրենք ստէպ սխալների մէջէն քայլելով եւ յոճախանոց զոհուելով, մէկ մէկ ճշմարիտ փորձառուներ դարձած են : Կ'ապացուցուի ուրեմն թէ, սխալներն փորձառութեան մէկ մէկ փորձաքարեր են, մանաւանդ որ զանոնք մերժելն մեր ձեռքն չ'է : Ուստի, պէտք է ներել քան թէ պատիժով փոխարինել նմանօրինակ սխալներն : Իսկ երբ հոս ալ համոզում ի դորժ՝ կը դուրսի, յայնժամ պիտի տեսնենք որ քիչ բացառութեամբ միայն առաջ պիտի գան անոնք : Մենք շատ առիթ չ'ունինք խօսելու ասոնց վրայ, բայց քանի որ ծնողների այս յոռութիւնները իւրացնող մանուկներն են, զորս դպրոցի տարբեր օրէնքներին կ'ենթարկենք, ադ որ համար կը խօսինք, մանաւանդ որ համեմատութեան բացակայութիւնն ճիշդ այս գեղձումներէն առաջ կը գայ :

Դեռ աւելին կայ : Մանուկների ինքնագործունէութիւններն տան մէջ՝ ընդհանրապէս եւ սովորաբար կը չըջապատուին այն կեղտոտ երեւոյթներով, որք մանկավարժական սխալէմէն դուրս են : Ասոնք գոնեա մեր տեսածներն են : Մանուկներն՝ ճշդ ապէս ընդօրինակող բնագոյումն ունենալով, իրենց կը սեպհականեն ինչ որ կը տեսնեն իրենց ծնողների եւ չըջակայների վրայ : Այս վերջիններն երբէք գաղափար չ'ունենալով թէ մանուկներն՝ իրենց հոգեկան եւ բարոյական ոյժերի միջոցաւ միշտ հազարումէկ լաւ եւ յոռի մտապատկերներ կ'իրացնեն, ընդհանրապէս անդդոյլ կը մնան իրենց յոռի շարժումներին մէջ որոցմէ երբ դուրս կը քաշենք զանոնք, բազմաթիւ յոռութիւններով համակուած կը գտնենք : Եւ արդէն մանուկներն յոռի, պաղարիւն, անզգայ, կղզիացած, ծոյլ, անտարբեր, չատաղրոյց, վախկոտ, չարամիտ, չահամու, ստախոս, ընկերատեաց, անխորհրդապահ եւ կը լին-

ին երբ այսպէս կը տեսնեն իրենց ծնողներն եւ չըջակայներն : Մանուկներն՝ երբէք մի որ եւ իցէ համակրութիւն չ'են կրնար ցուցնել իրենց գաղափարական կրթիչների նկատմամբ, մանաւանդ որ յայտնի թշնամութիւն ալ կը ցուցնեն անոնց դէմ շատ անգամ, երբ իրենց ծնողներն, կ'ատեն, կ'արհամարհեն, կը հայհոյեն (ի հարկէ շատ անգամ առանց իրաւունքի) եւ ծաղրի առարկայ կ'ընեն իրթութեան այդ դնահատեղի առաքելներն (բացառաբար) : Մանուկներն՝ դպրոցի կրթական ուղղութեան վրայ արամաքանական համոզումը գոյացընելու բաւականութիւն չ'են ցուցներ բնաւ, երբ կը տեսնեն որ իրենց ծնողներն անոր փշրանքն անգամ չ'ունին : Մանուկներն՝ երբէք չ'են կրնար յարմարուիլ դպրոցի կրթական հրահանգներին եւ պահանջումներին, երբ իրենց ծնողներն կը յորդորեն զիրենք որ սարադայներէ համեմատ չ'անան անոնց : Բացի այդ, ծնողներէն խրախոյս տալով դասարանական ժամ չը լրացած դպրոցէն տուն դառնալն, ճիշդ ժամին զգարոց չը հասնիլ, երբեմն ծնողների զուարճութեանց մասնակցելու համար օրերով, ամիսներով բացակայ մնալն, դպրոցական դասընթաց չ'աւարտած հրաժարիւն, դասագրքերի ընտրութիւնն՝ իրենց ծնողներին եւ իրենց քահանայից վերապահելն, տնական աւելորդ ապաստ սովորոյթների գործադրութիւնը դպրոցի մէջ պահանջելն, իրենց զաւակների հոգեկան, բարոյական եւ մարմնական կրթութիւնն իրենց նախապաշարումների եւ միջնորդարեան կրթութեան վրայ ձեւել եւ դպրոցի ծրագիրը անձնիւր ծնողի քահանայից համեմատ գծել պահանջելն եւ եւ, ասոնք ամենք՝ ինչպէս նաեւ դպրոցներին օտարոտի պահանջներն, համեմատութեան բացակայութիւնն առաջ կը բերեն տան եւ դպրոցի միջեւ : Վնասն երկու թատերաբեմին ¹⁾ վրայ ալ զոհուողին (մանուկ-աշակերտին) է միայն :

Այլ սակայն այս հակացոյցն՝ պէտք է բառնալ մէջտեղէն : Պէտք է տեսնան հանգամանքներն եւ պահանջներն զոհել դպրոցական հանգամանքներին եւ պահանջներ-

¹⁾ Երկրորդ թատերաբեմին (դպրոց) խօսած ենք որդէն :

րին, ինչպէս փոխադարձաբար դպրոցինն տան, կամ թէ չը գոհել, այլ յարմարցնել, գլխաւորաբար տնական յոռի կենտրն (բացառաբար) բարեփոխելով:

Պէտք է, գործողութիւնն մէկտեղ սկըսելով, երկուքին ալ միօրինակ ուղղութիւն տալ: Ծնողներն են, որ պէտք է կրթութեան առաջին կայծերն ներշնչեն իրենց զաւակներին, այլապէս անոնց միջոցաւ արմատացած չար հասկումներն արմատախիւ ընել՝ դպրոցական կրթիչների գործն չ'է, այսինքն գրեթէ անհնարին:

Տան եւ դպրոցի միջեւ համերաշխութիւնն, որի մէջ կը կայանան միօրինակ պահանջներ, մանուկների հոգեկան, բարոյական եւ մարմնական ինքնաբերականութիւնն այնպիսի սահմանի մը մէջ կը դնէ, որտեղ միակերպ կրթութիւնն կեդրոնաձիգ եւ կեդրոնախոյս զօրութեան մը պէս միշտ գործօն, յարաձուռ եւ նպատակայարմար վիճակի մէջ կը պահէ զայն: Հակառակ պարագայի մէջ, այսինքն երբ անջրպետ մը կը դնենք տան եւ դպրոցի պահանջներին մէջ տեղն, անոնց ինքնագործունէութիւնն անձեւ, յոռի, եւ թոյլ գոնգուած մը կը դառնայ:

Արդ, կ'եզրակացնենք թէ մինչեւ որ համերաշխութիւն չը հաստատենք տան եւ

դպրոցի միջեւ, անկարելի է որ մեր կրթութեան գծերն նպատակայարմար վախճանի մը յանգին: Մինչեւ որ մեր մանուկների հոգեկան, բարոյական եւ մարմնական առանձնայատկութիւնը տան եւ դպրոցի միօրինակ ուղղութիւնով չը կրթենք, մինչեւ որ մեր ծնողները չը համակերպին այն ամէն պահանջներին զորս կը սահմանէ զըզրոց, մինչեւ որ մեր ծնողներն ակնածութիւն չը ցուցնեն դպրոցի եւ անոր պաշտօնեայների նկատմամբ (թէպէտ այս վերջիններն ալ փոխադարձ պարտականութիւն պիտի համարին մի եւ նոյն յարգանքն ունենալ դէպի տուն եւ անոր անդամներն), մինչեւ որ մանուկների կրթութեան երկու կողմաններն ալ մի եւ նոյն նախագիծով չը պատրաստուին, մինչեւ որ տան եւ դպրոցի աւելորդազաւորական սովորոյթներն, նախապաշարունակներն, անաղիւ վարմունքներն, կրթական բռնապետութիւն, կրթական ձեւակերպութիւն, յոռի բնասիրութիւններ եւ մէջտեղէն չը վերցնենք, անկարելի է որ մեր դպրոցներն ազգային կրթութեան համար ընտիր, անկեղծ եւ օգտաւէտ մշակներ կամ առաքեալները պատրաստեն:

Վան

ՍԻՄՈՆ ՅՈՎՆԱՆԵԱՆ

ԲԱՐԻՁԻՆԱ

ՎԷՊ LORS ՊԱՅՐԸՆԻ

ԺԳ.

Աստ Ազգայն խոթորաստող ըզկերպարանսն ծածկեաց .

Զի ըզգաց ի ճակատուն զուռոյց եւ զթինդ երակաց ,

Որպէս այն թէ արիւնն անդրէն յուղեղն վազէր .

Վայրիկ մի եկաց ըզգլուխն յերկիր խոնարհեալ :

Եւ ըզձեռսն դողդոջունս էած աչացն ի վերայ ,

Ի ծածկել ըզնսին յաչաց մարդկանն որ կային :

Անդ Հիւկոյ ըզկաշկանդեալ բազուկսն ի վեր ամբարձեալ

Խընդրեաց ի հօրէն լըսել վայրկեան մի առ նա .

Անսացեալ ծընողին հաւանեցաւ լըռելեայն :

« Յօրհասէն ոչ երկընչիմ, թէպէտ մերձեալ կամ ի մահ .

« Զի եւ դու ինքնին տեսեր յորժամ աչացդ առաջի

« Հորդէի ըզաւելոյ յարիւնորոգ ճակատուն ,

« Եւ ոչ անօգուտ եղեւ երբեմն այդ սուսեր ,
 « Զոր ըստրուկք քո ի ձեռացս յափըշտակեալ խրզեցին .
 « Որ ի քոյդ ծառայութիւն եհեղ արիւն առաւել
 « Քան զոր թափեսցէ տապարն որ անդ մընայ ինձ .
 « Դո՛ւ ետուր եւ կարես հանել ի բաց ըզկեանս իմ .
 « Վասն այդըր պարզեւաց չեղէց առ քեզ շնորհապարտ :
 « Զեմ երբէք մոռացեալ ըզնախատինս մօրն իմոյ ,
 « Ոչ սէրն արհամարհեալ , զանուան նորա անարգանս .
 « Զամօթըն թողեալ ժառանգութիւն առ որդին .
 « Բայց նընջէ նա ի հող գերեզմանի՝ ուրանօր
 « Որդի իւր , նախանձորդ քո , իջցէ ընդ հուս խորասոյդ .
 « Սիրտ նորա հեղձամբղձուկ եւ սրախողխող գըլուխն իմ
 « Ի խորոց դամբանին վըկայութիւն մատուցեն
 « Սիրոյդ առաջնոյ եւ հայրագութ խընամոց .
 « Իրաւ է՝ զի առ քեզ անիրաւեալ գըլոյն ես ,
 « Էր այդ գըրկանք ընդ գըրկանաց — եւ կարծեցեալն ամուսին ,
 « Սընափառ գողողութեան ոգւոյդ երկրորդն այն ըսպանդ ,
 « Գիտէիր եթէ ինձ էր վիճակեալ ի վաղուց .
 « Եւ տեսեալ քոյ պնա , ի սէր գեղոյն վառեցար ,
 « Եւ զիմոյ կենաց ծընունդըն , ըզքոյ չարեացըդ զոճիր
 « Համարեալ ի յանցանս ինձ , ոչ դատեցար արժանի
 « Գոլոյ հաղորդակից ամուսնական իւր սիրոյն .
 « Եւ վասն էր — զի չկարէի այլ եւս ի քէն պահանջել
 « Կալ օրինաւոր ժառանգ անուան իշխանիդ ,
 « Եւ բազմեւ յաթոռ Էսդեայ հայրենական իրաւամբք :
 « Այլ եթէ սակաւ դարուես էր իմ կեցեալ տակաւին ,
 « Իմ անուն քան ըզհամբաւ Էսդեայ պայծառ նըլողէր .
 « Եւ ինձ միայնոյ լինէր պարծանք համբաւոյն :
 « Էր իմ սուսեր եւ է իմ սիրտ , որ է կարող ժառանգել
 « Սաղաւարտ խըրոխտապանձ՝ քան զոր այլ ոչ փայլեցաւ
 « Ի սերունդս համօրէն իշխանապանձ հաւուց քոց .
 « Ոչ իսկ միշտ վարեցին փառօք մըտրակա ասպետի՝
 « Որոց ազգատոհմն աղնըւական էր զարմիւ ,
 « Եւ իմ մըտրակք ճնշեալ ըզկող երկվարին գեղավար ,
 « Զանցուցին քան զընթացըս ազատազարմ իշխանաց ,
 « Մինչ վազէի ձայնեալ զէսդէ եւ զյաղթութիւն կարդալով :
 « Ես ոչ պաշտպանեցից զմեղուցելոյն դատաստան .
 « Եւ ոչ խընդրեցից զի խնայեսցէ ժամանակն
 « Ըզվայրկեանըս կարճատեւս եւ կամ զաւուրս անցաւորս ,
 « Որովք կեալ կարէի՝ չեւ լեալ աճիւն անըզպայ :
 « Երազոյ անցելոյն պարտ էր գոլ սուղ , եւ եղեւ :
 « Թէպէտ արհամարհեալ իցէ անուն իմ եւ եւ ազգ ,
 « Եւ թէպէտ քոյոց մըտացդ ազատական բարձրութիւն
 « Զկամեցի պատուել զայր՝ որպիսի որ եսս իցեմ ,
 « Սակայն ի տեսիլ դիմաց իմոց երեւին ,
 « Նըշխարք ինչ պատկերի կերպարանաց հօրն իմոյ ,
 « Եւ ի ներքս ի հոգիս ըզքեզ կըրեմ թովանդակ :
 « Ի քէն ընկալայ բոլոր իւրեանց զօրութեամբ
 « Ըզբազըւկ կորովի եւ հրակայլակ վառ հոգի .

« Ետուր ինձ կեանս եւ զամենայն որովք առ քեզ նմանեցայ :
 « Տես զի՞նչ արարին տարփանք քոյին մեղապարտ .
 « Փոխարէն մատուցին տըւեալ զաւակ նըման յոյժ :
 « Զիք ի ներքս ի հոգիս օտարախորթ ինչ ի քէն
 « Զի ըստ քումդ օրինակի մերժեմ ըզլած զամենայն ,
 « Բայց կեանք իմ կարծօրեայ՝ է վաղանցուկ ինչ պարգեւ ,
 « Զոր ետուր եւ այդպէս վաղվաղակի բառնայցես .
 « Եւ զոր ոչ մեծ ինչ գըրէի , որպէս եւ ոչ դու ինքն իսկ ,
 « Յորժամ ի ճակատուդ ըզսաղաւարտն ածէիր ,
 « Եւ մեք կող առ կող նախանձաբեկք իրերաց ,
 « Զերիվարսն վարէաք ընդ դիակուռնս անկեւոյ :
 « Ոչինչ է անցեալն , որոյ ըստուեր է ներկայն .
 « Բայց ես ցանկայի յայնժամ անկեալ մեռանել ,
 « Զի թէպէտ ըզչարիս դու մօրն իմոյ նիւթեցեր ,
 « Եւ ի քեզ կարգեցեր ըզհարսն առ իս վիճակեալ ,
 « Այլ ըզգամ տակաւին եթէ ծնողն իմ ես դու .
 « Եւ որչափ անողորմ իցէ վըճիռն օր ի քէն՝
 « Զէ երբէք անիրաւ , թէպէտ յաջոյ քոյ կընքեալ :
 « Ի մեղքս ծընեալ՝ անարգաբար մեռանիմ ,
 « Որպէս ըսկըսայն՝ նովին կենօք վախճանիմ .
 « Որդին սըխաւեցաւ՝ որպէս եւ հայրն իսկ ինքնին ,
 « Եւ ինեւ զերկոսեանս ի միասին պատժեցես .
 « Յանցանք իմ երեւին յաչըս մարդկան մեծագոյն ,
 « Բայց ընդ իս եւ ընդ քեզ , Աստուած ինքնին դատեսցէ » :

ԺԴ .

Դադարեաց եւ եկաց՝ եղեալ ըզճեռսն ի ծոցին ,
 Եւ բազկացըն չըղթայք ուժգին շարժեալ հընչեցին .
 Այն չըլուկ զամենեցուն ականջս հարեալ թընդեցոյց՝
 Զարանց միահամուռ ժողովեոց անդանօր ,
 Մինչ սարիք տըխրահընչակք սաստիկ բախեալ շաչեցին :
 Յետոյ Բարիդինա մահահամբոյր հըրապոյրք ,
 Ըզբնաւիցն հայեցուած յինքն ծըգեաց վերըստին :
 Զիսորդ հանդուրժեսցէ ի լուր վըճուոյ օրհասին :
 Որպէս նախն ասացի , կայր նա հանդարտ եւ տըժգոյն ,
 Պատճառ կենդանի չըւառութեանն Հիւկոյի .
 Աչք նորա անշարժունք ոչ փակեցան անգամ մի ,
 Կամ շուրջ զականողեօքն իւրովք ածին ըզժածկոյթ :
 Այլ լայնեալք՝ շուրջանակի ըզկապուտակ իւր բըբովք ,
 Իբրեւ ձէւնափայլ իմըն կամար կազմէին :
 Եւ կայր նա յոտին , եւ աչքն հանգոյն ապակւոյ ,
 Որպէս այն թէ յերակունսն արիւնն ի պաղ էր մածեալ .
 Եւ սակայն մերթ ընդ մերթ խոշոր կաթիլ արտասուաց
 Ժողովեալ մեղմաբար՝ սողոսկելով կայլակէր
 Ընդ ճերմակ արտեւանանցն երկայն եւ թուխ խոպոպիս .
 Մարթ էր զայն տեսանել աչօք եւ ոչ թէ պատմել :
 Որք տեսին միանգամ՝ ի յափշուրթիւն կըրթեցան ,
 Թէ այն արտասուք յաչաց մարդկան կաթեսցեն :

Խօսել կամեցաւ — կիսակատար ըն բարբառ
 եկաց հեղձամղձուկ ի կոկորդին կերկերեալ .
 Եւ գողցես հողոց հանէր հեծեծախառն հառաչմամբ՝
 Յոր սիրտըն բովանդակ թըւէր զեղուլ յորդարուխ :
 Լըռեաց եւ խընդրեաց խօսիլ անդրէն միւսանգամ,
 Բայց յայնժամ յերկայն ճշիւն մոխեցաւ ձայն բարբառոյն .
 Եւ զերդ վէժ կործանեալ թաւալեցաւ ընդ գետին,
 Կամ իբր արձան ի խարըսխէն իւրմէ ի վայր տապալեալ .
 Առաւել նըման նիւթոյ՝ որ ոչ իցէ առեալ կեանս,
 Կամ հարսին Ազոյի անշընչաւոր պատկերի,
 Քան կընոջ յանցաւորի, կենդանութեամբ միայլելոյ .
 Որ առ բուռն կըրից, իբր ի սաստիկ ինչ խայթից՝
 Իցէ յեղեռն անկղիտացեալ, բայց ոչ տանել կարիցէ
 Յանցանացն յայտնութեան եւ յուսահատ անձկութեան .
 Կենդանի էր տակաւին — սակայն իսկոյն վերըստին
 Ածաւ ի զգաստութիւն ի մահատիպ նուաղմանէն .
 Բայց ոչ միտքն էին առողջ, զի զգայութիւնք իւր ողջոյն
 Ի ցաւոցն անհընարին սաստկութենէն մաշեցան .
 Եւ ուղղոյ խեղացն իւրոց իւրաքանչիւր թելք տըկարք,
 Իբր լար աղեղան որ թուլացեալ յանձրեալ
 Ըզթօնիչն նետից խոտորնակի արձակէ,
 Տարտամ եւ անիմաստ խորհուրդս յառաջ անէին .
 Ոչ գոյր անցեալ վասըն նորա, եւ ապառնին էր խաւարոյ,
 Յոր հազիւ տեսանէր ըզմութ չափը ցաւագին .
 Զերդ ուղեւոր՝ որ մոլորեալ յամայս ընդ ցայդ մրկայոյզ,
 Գընայ ըզճանապարհն ի փայլ լուսոյ կայծականց .
 Երկընչէր — ըզգայր յանձին եթէ վընաս ինչ չարեաց .
 Յողիսըն ծանրանայր՝ իբրեւ ըզբեռն ցըրտին .
 Գիատէր եթէ ոճիր եւ ամօթ կայր ի միջի .
 Թէ գոյր մեռանել ումք մահուամբ . բայց թէ ո՛վ,
 Ի մուաց արկեալ էր զայն . Դեռ կենդանի՞ էր արդեօք .
 Ի ներքոյ ոտից իւրոց միթէ կոխէր նա զերկիր .
 Նոյն երկինք էին ի վեր, նոյն եւ մարդիկն որ զիւրեւ,
 Թէ էին դեւք՝ որք հայէինն ըսպառնալից ժանտ աչօք,
 Մինչ նա միշտ տեսանէր երբեմն աչացն առաջի
 Ըզգէմըս մըտերիմս եւ ի ծիծաղ զուարթագին .
 Բնաւ ինչ խառնակ էր եւ տարտամ ի ցնորակոծ իւր ի միտս .
 Էր անդունդ ակընկալեաց եւ խօլական արհաւիրաց .
 Ընդ արտօսր եւ ընդ ծիծաղ զառանցանօք դանդաղեալ,
 Նեղեալ տագնապէր մըտացածին խորհրդովք .
 Այս ահա փոփոխումն երեւեցաւ ի նըմա .
 Ո՛հ, ի զուր լիցին հընարք ի զգաստութիւն դառնալոյ :

Թարգմանեաց

ՊՕՂՈՍ ՄԻՍԻՔՅԻՆԱՆ

(Շարունակել է)

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՅԵՏ ՓՈԹՈՐԿԻՆ

Հովը զարկաւ զինչ դիւանար անտառին ,
 Ի՛նչ խռովութիւն ահագին .
 Վեր վար ելնեն իջնեն կարգեր ծառերուն ,
 Եւ սօսինք շուրջ գալարում եւն ճրկուն :
 Խորհրդաւոր չորս դին է մուռնչ ալեձեւ .
 Լեցուց փոշի , չոր տերեւ
 Օդում մըթին , որ ամպերից սեւ ակոյտ
 Հսպառնալից առաւ վըսեմ երեւոյթ :
 Ո՛հ ինչ տապնապ յանկարծական հարուածից .
 Թընդաց աշխարհք սարսաղից .
 Ինչպէս սիրտն էլ նոյն խոնարհի եւ ուռի
 Տեսարանիս առջեւ առ ցաւ մայրենի :
 Արդ պայթում է որոտ կամրից գոգաւոր
 Գունտի նըման ինքնագլոր
 Ամպերուն մէջ , որ աւելի թըխացան ,
 Կայծակն ինկաւ կարմիր գըծով շեշտ հրա-
 ցան :
 Շառաչաձայն ուժգին թափաւ ետեւէն
 Յամբած երկրում վազելէն ,
 Զինչ մըտորակին զարկեր յըստակ , անձրեւն
 յորդ .
 Մըշուշապատ թըւի մի ցած մըթնորոտ :
 Գետոյ բիչ բիչ երկու կողմից ձեղքըում ,
 Նոր պարունակ մի՛ է բացում ,
 Լերանց զըւարթ գագաթներն եւ բարձրա-
 յայտ ,
 Երկինք մաքրում է արեւուն ճառագայթ :
 Եւ խառն շողին մեղմ ճաճանչներ ըզբօսնուն
 Գոհար ցանած դողդաջուն .
 Լայն տատանում է հորիզոնն գունաւորիս ,
 Առաւօտեան հեշտին ազդամբ սիրտ բացող :
 Ո՛հ անուշ յոյս . փայլի զինչ լիճ մարդ թա-
 թաւ :
 Դեռ անտառին խորը թաւ
 Շըշունջ շարժի խուլ , և բնութիւն զովագին
 Հանդարտում է , զէտ սըրտագող տըղեկին :
 Ահա մէկէն բլւր միջատներ երինարիւծ
 Թըռչըտում են ծաղկներից ,
 Զինչ ծըւէններ ծըփող առնեն ելեւէջ ,
 Ի՛նչ գեղեցիկ պար դիւթական օդուն մէջ :

Ուրեմն դուք պահաւք , սիրուն թիթեռներ .
 Ի՛նչպէս տըղար թեւիկ ձեր
 Չեղաւ բեկրեկ ներքեւ հասող այն ջըրին ,
 Ի՛նչպէս նախուն նուր զարդարանք մընա-
 ցին :
 Ո՞վ ձեզ անանկ փափուկ սիրով խընամեց ,
 Անչափ շընորք պարգեւեց .
 Թըռչք դաշտում ձեզմով կըրկին ծաղկաբեր .
 Ստեղծեալը դուք էլ պըճնեցէք , միջատներ :
 Մարդն եւս հոգնած արդ հանգչում է այ-
 րոց հետ ,
 Սիրելութեան քաղցրաւէտ
 Ժըպիտ գըզում է իր ցաւած աչերուն ,
 Իրան սըղմել պէտք է զգում կուրծք մի-
 ւանդուն :
 Հէնց հիացած միտ դընում է թըռչունին ,
 Զինչ մի ձայն է երկնային
 Անոր երկայն ձըզում ինքնաղ արձագանգ ,
 Սիրտ գոհութեան Տիրոջն հանէ սուրբ մաղ-
 թանք :
 Արդ թող կախուի օդին միջեւ ծիածան ,
 Կու դիտենք զայն , սիրական ,
 Հաճելագոյն է զուարճալիք մեզ համար .
 Աշխարհազօդ սիրոյն թըւի պերճ կամար :
 Նայուածքիդ ձիգ տուր տեսնալու երկըն-
 քում
 Զինջ կապուտին ծաւալում .
 Սակայն բիբեր չեն կարենում ընդ երկար
 Փայլունութեան հարթ դիմանալ նետահար :
 Փայլակներից գոց ահաբեկ եւ լըռիկ
 Բանայ վարդոյրն ընտանիք .
 Հոն են խորչում պապն եւ մանկան օրհնած
 գլուխ :
 Կատակ անեն ամէնք , ճոքնչում է սանդուխ :
 Տըղաք ցատկեն , մէն բընտում է զիր ըն-
 կեր ,
 Երկայն , հընչուն դան ծաղրեր ,
 Կըլկըլացող սրինգ գեղգեղէ մըշակից ,
 Հուսող կանայք նըստին տան քով խօսակից :
 Երբ փըշում է մի բամբի զով հեղանաղ ,
 Եւ վերցըրում ճակտիդ մաղ .
 Ախորժ թողել ու լաշակով խաղալու ,
 Որ թափանցիկ ուռեցրեց ծոցդ աղաւնու :
 Ա՛խ ինչ սիրուն ես դու հիմայ չունչդ ի հե ,
 Յաւերժահարս մի թեթեւ .

Սանկ սիրում եմ որ զարմացմամբ աչերուս
Հողիս ծովի՝ կասկածանօք իբր անյոյս :

Ձի երբ տեսնամ որ ես այնչափ դուն աղւոր՝
Վախով քեզի էլ մի օր

Կորցրելու սիրտըս թընդում է վազան .
Գեղեցկութեանս այս զիս գիտեմ անարժան :

Պաշտելով չեմ համարձակիր գալու մօտ .

Թէպէտ սաստիկ է կարօտ

Թեւով բոլոր առած մէջբիցը բարակ
Ժուռ գալ սլարտէզն, ուր առաւ թարմ ծիւ
բուսակ :

Տես ծիրանի պըտկուկներուն բացխրիկի ,

Որ թէ մոգիչ մատդ փափկիկի

Դըսչիլ փորձէ, զինչ մէջն ինկած կաթիլ շաղ .
Անշուշտ խկոյն բացի ծաղիկ մի չըքնաղ :

Թող զարդարեմ գըլուխըդ թարմ կանանչից ,

Գեղացւոյն տիկ երգակից .

Նըստինք մէկտեղ, կակուղ մամուռն է ծա-
ռին ,

Իմ յունական եղիր նազուկ հովուհին :

Ի՛նչ բընութիւնն դեռ իսկ տամուկ նորոգ-
ւած

Խանդաղատիլ ի հիամաց

Պատճառում է մարդուն աղիւ ըզգացման,
Զաստուածայինն այդ տարածած տեսարան :

Մէկն ունենալ քաղցր է ատանկ ատեն վեհ

Մըտքով փայլուն՝ որ պատեհ

Ազդեցութիւնքն ամէն, տիպեր անձնական
Բացատրելու միշտ հետազօտ միարան :

Եւ դու, սէր իմ, բովիկըս լուրջ ժամ երկար

Ուշադրութեան ես յօժար ,

Հուսկ բարձրաձայն խընդումերես աշխուժով
Զըգում ես զիս քու թեւերուն առ գորով :

Երբոր վըրաս խոնարհ կենայ մի նըկատ

Գեղեցկութեան խանդակաթ ,

Ինչո՞ւ մընամ այսպէս ի զուր վըշտալից
Ողբն անըստառ սլարդել տըկար այս սըրտից :

Ա՛յ թըշուառիս որուն համար անհամբեր

Բերկրանքն իսկ է տըրտմաբեր .

Ոչինչ ըզգալ ներքին սիրով չէ կըրցել

Առանց որ գան սև խորհուրդներ պըղտորել :

Սիրականդ իմ, ահա 'տի լամ, զիս այսպէս

Գիտեմ իսկի դու չուզես .

Թող արցունքներ սլաղիկներուդ մէջ անուշ
Անհետանան . վարդը քացենք , թողնենք
փուշ :

Այսպէս թէ մարդ փետտէ ձեռքով միշտ
փութկոտ

Պըստի կենաց սիրազօդ ,

Տեսնայ պիտոր թըռչիլ օրերն իր դալար
Նըման ծառին սերեւներուն հողմատար :

Ո՛հ տըխուր սիրտ անում է զայս ձանձրա-
ցած

Յետոյ կոծում է հողած ,

Առանձնութեանը մէջ բնութեան ինքնա-
տուր ,

Եւ կարօտից օտար մանկան տայ համբոյր :

Ես էլ ասանկ ապրիմ, թերեւս հանդարտիկ ,

Զիս չը նեղէր յուսալիք ,

Անփայթ անել ժամն անցաւոր եւ հաճոյ —
Կըտան անշուշտ ուրախութիւնքըն սիրոյ :

Թէ աննըշան, կարճած իմ կեանք ցաւելէն ,

Յիշատակիս հող ցանեն ,

Ա՛հ հէնց ցամբած , անմըխթար ոսկորներ

Գարնանային գէթ այս քիչ ցօղ թեթեւ-
ցնէր : . . .

Վ. ՍԵՎԱԶԵԱՆ

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ՄԱՐԴ ԿԸ ՄԵՌՆԻ՞ ԵՐԿԻՒՂԷՆ

Մարդ կը մեռնի՞ երկիւղէն , կը հար-
ցընէ անգլիական բժշկական թերթ մը ,
Լանսէթ , Գիդինկի մէջ վերջին օրերս տեղի
ունեցած դէպքի մը առթիւ : Պատասխանն
հաստատական է, գէթ յիշեալ դէպքին մէջ :
Մանկամարդ կին մը, ուզելով վերջ տալ իւր
կենաց , կընած էր բաւական քանակութեամբ
միջատասպան փոշի , յետոյ անկող-
նոյն վրայ տարածուած էր , ուր քանի մը
ժամ վերջ մեռած գտնուեցաւ : Քննութիւն
բացուեցաւ և դիակատութիւն եղաւ : Ստա-
մոքսին մէջ գտնուած փոշիին տարազաղա-
դրութիւնը ցոյց տուաւ թէ այս փոշի ինք-
նին բոլորովին անվնաս էր , գէթ մարդկա-

յին էակի մը համար : Եւ սակայն ծաղկահասակ կինը չէնքով շնորհքով մեռած էր : Այդ գործն ստանձնող բժիշկը կը հաւատաւ թէ կինը, խանդավառ երեւակայութեան և չափազանց քաջային բարեխառնութեան տէր, թափկացմամբ մեռած է այն բուն սրտայուզութենէն որ հետեւանք էր մահացու ենթադրութեամբ փոշիին կնիման :

Լաւեհ այս անթիւ կը յիշէ ուրիշ երկու օրինակներ, յորս մահը նմանապէս վրայ հասած է խորին սարսափի մը ազդեցութեամբ :

Առաջին դէպքին դիւցազնն է անցեալ դարուն մէջ անգլիացի մահապարտ մը որ բժշկաց ձեռքն յանձնուած էր հոգեբանական փորձի մը համար : Այս դժբաղդը փոկերով ամրապէս կապուած էր սեղանի մը աշերը կապած էին, յետոյ ծանուցած էին նմա թէ ծոծրակը պիտի ծակուէր եւ թող պիտի տրուէր որ արիւնն հոսի մինչեւ որ սպառի : Ետոյ մտքին վրայ ամենաթեթեւ ձեղք մը բացին ասեղով մը եւ գլխուն մօտ դրին ապակեայ խողովակ մը, այնպէս որ ծոծրակին վրայ կը վազցնէին ջրի ցայտ մը որ անընդհատ կ'իյնար, թեթեւ շուկով մը, գետինը դրուած կոնքի մը մէջ : Այնք վայրկեան յետոյ, մահապարտն, համոզուած թէ առ նուազն վեց եօթն բնիւ արիւն կորսնցուցած էր, երկիւղէն մեռաւ :

Երկրորդ օրինակը կը վերաբերի վարժարանի մը դռնապանին որ իւր հակողութեան ներքեւ գտնուող աշակերտաց ատենաւթիւնն հրաւիրած էր իւր վրայ : Այդ երիտասարդներէն մի քանին օր մը բռնեցին դռնապանը, մութ սենեկի մը մէջ փակեցին եւ անոր ի ներկայութեան բացին կեղծ հարցաքննութիւն մը եւ դատաւարութիւն մը : Մէջ տեղ բերին անոր բոլոր ոճիրներն, և եզրակացուցին թէ մահուամբ միայն կարելի էր քաւել զայնս եւ թէ ամենէն արժանի պատիժն էր գլխատումը : Հետեւաբար գնացին բերին տապար մը եւ կոճղ մը, զորս սրահին մէջ անդ դրին : Ծանուցին մահապարտին թէ երեք վայրկեան ունէր զղջալու եւ երկնից հետ հաշտուելու համար : Վերջապէս, երեք վայրկեանէն յետոյ, աշերը կապեցին, բռնի ծնրադրել տուին կոճղին առջեւ, վիզը բաց, և ծոծրակին վրայ ուժգնապէս զարկին թրջած

անձեռոց մը եւ խնդալով ըսին որ ոտք ելնէ : Սակայն ապշութեամբ տեսն թէ մարդը չէր շարժեր : Երեքուցին, բազկերակը նայեցան : Մնած էր : Անշուշտ երկիւղէն մեռած, այն սոսկալի փորձին ազդեցութեան ներքեւ որում ենթարկուած էր :

ԵԻԱՅԼՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԿԱՐԳԱՐՈՒԹԻՒՆ

ԳԱԻԱՌԱՅԻ ԲԱԺԱՆՈՐԴԱՅ ՀԱՄԱՐ

Ի խնդրոյ Գաւառացի բաժանորդաց ունեցող, որք առանձին Պոլսոյ մէջ մէկ մէկ ներկայացուցիչ ունենալու կամ ամեն շաբաթ իրենց շաբաթականներն, զրկելու համար դժուարութիւն կը կրեն, Արեւելեան Տնտեսական Միութեան Տնօրէն Ժողովն խնամակալաց Ժողովոյ հաւանութեամբ հարկ դատեց հետեւեալ կարգադրութիւններն ընել ի զիւրութիւն այնպիսեաց գաւառացւոց :

1⁰.— Գաւառներէն Արեւելեան Տնտեսական Միութեան անդամ գրուիլ ուզողներն պարտին Պոլսոյ մէջ ներկայացուցիչ մը ունենալ ըստ օրինի, քանզի Միութիւնը Պոլսէ դուրս անհատներու հետ յարաբերութիւն չի կրնար ստանձնել :

2⁰.— Եթէ գաւառի մը կամ Պոլսէ դուրս բաղադրի մը մէջ գտնէ տասն անձինք Միութեան անդամակցելու փափաքող գտնուին, նոքա կրնան միանալով իրենցմէ մէկը փոխանորդ ընտրել եւ Միութեան տեղեկագրել : այսպէս ընտրուող փոխանորդը Միութեան կողմանէ եւս ընդունուելէ ետքը կրնայ ամենուն կողմանէ փոխանորդաբար Միութեան վարչութեանը հետ յարաբերութեան մտնել :

3⁰.— Գաւառական փոխանորդի պարտականութիւնքն են .

Ա. իւր կողմի բաժանորդաց վրայ ճշգրիտ տեղեկութիւն տալ Միութեան :

Բ. բաժանորդաց դիտողութիւններն Միութեան ծանուցանել :

Գ. իւր ներկայացուցած բաժանորդաց շաբաթական վճարումներն գանձել եւ կա-

նոնաւորապէս Միութեան Մետուկի հաս-
ցընել ազատ ամեն ծախքերէ :

Դ. Կանոնաւոր տուժար ունենալ՝ իւր
բաժանորդներն եւ անոնց վճարումներն
արձանագրելու համար :

Ե. Ամեն ամիս որոշեալ օր մը իւր բա-
ժանորդներն հրաւիրել եւ Միութեան վե-
րաբերեալ ամեն տեղեկութիւն անոնց հա-
հալորդել եւ ի տես զնեւ ընթերցանու-
թեան համար Միութեան պաշտօնական լու-
րերն պարունակող լրագիրն :

Կ՞.— Գաւառական փոխանորդը պարտի
գործակատար մը ունենալ Պոլսոյ մէջ եւ իւր
բաժանորդաց գրականակներն անոր ձգել
վճարմանց նիշերն փակցուելու համար: մինչ-
դեռ այդպիսի գործակատար մը չէ կար-
գուած, բաժանորդաց գրականակներն կրնան
առժամանակեայ կերպիւ ընդհանուր քար-
տուղարի քով ձգուիլ: նոյն գործողութեան
համար, ընկերաց հաշիւներն ամեն ամիս
լրագրի միջոցաւ յայտարարուելով :

Զ՞.— Գաւառական փոխանորդի պաշ-
տօնն երկու տարի պիտի տեսէ. լրացած
ատեն բաժանորդը պարտին ժողով կազ-
մելով նոր ընտրութիւն կատարել: Նախոր-
դը վերընտրելի է :

Է՞.— Եթէ փոխանորդն իւր պարտա-
կանութիւնները չի կատարէ, երեք բաժա-
նորդք միանալով ժողով կը հրաւիրեն ուր
կ'ատենապետէ իրենց մէջէն երիցագոյնը եւ
անդ պէտք եղածն կը տնօրինեն :

Ը՞.— Գաւառական փոխանորդներու ը-
նելիք ծախքերուն փոխարէն՝ ինչպէս են,
տոմարներու, նամակագրութեան, փոս-
տայի, դրամի փոխադրութեան, լրագրի եւ
ծախքերն, գաւառական այն բաժանորդը
որ նոյն փոխանորդի միջոցաւ իրենց վճա-
րումներն կը կատարեն, պարտին արա-
թական տասն դշին վրայ մէկ դշ ալ աւելի
վճարել. այս աւելորդ վճարուած մէկ դշը
փոխանորդին ընելիք ծախքերուն փոխա-
րէնն է, որ անկէց աւելի բան մը չի կրնար
բաժանորդներէն պահանջուիլ :

Թ՞.— Ընկերներէն եթէ չ'ուզեն իրենց
չաքութականներն՝ ընտրուած փոխանորդին
միջոցաւ վճարել, պարտին իրենք առանձին
մէկ մէկ գործակալ ունենալ Պոլսոյ մէջ,
կամ այնպիսի տասն ընկերներ միանալով ի-
րենց զատ փոխանորդ մը ընտրել :

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Արեւել. Տեղեւ. Միւսթեան

Կ. Պոլիս, յուլիս 4

Ղալաթիա, Զիվէր-պէյ խան

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թիւ 21.	(Մ. 3814)
» 33.	» 3826)
» 34.	» 3827)
» 35.	» 3828)
» 36.	» 3828)

ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐԺԱՐԱՆ

Կեդրոնական վարժարանի խնամակալու-
թեան կողմէ հետեւեալ ազգերը զրկուած
է մեզ ի հրատարակութիւն .

Ազգային կեդրոնական վարժարանի
խնամակալութիւնս իւր 1886 մայիս 7ի ազ-
դարարութեան համեմատ, պատիւ ունի
ծանուցանել թէ ներկայացեալ եւ արձա-
նագրեալ աշակերտելոց քննութիւնը պիտի
կատարուին յառաջիկայ օգոստոս 4 երկու-
շարթի օրն յատուկ մասնախմբի մը ձեւով:
— Հետեւաբար քննութեան մտից տօմս ու.
նեցող՝ աշակերտք կը հրաւիրուին նոյն օրն
առաւօտեան ժամ 2 1/2 ին ներկայանալ ի
Կեդրոնական վարժարան: Արձանագրեալ
և տակաւին քննութեան մտից տօմս չ'ստա-
ցող աշակերտք կրնան խնամակալութեան
ղիմել մինչեւ նոյն թուականն եւ ընդու-
նիլ հարկ եղած արտօնագիրն :

Կեդրոնական վարժարանի խնամակա-
լութիւնս, Ազգային վարչութեան հետ հա-
մաձայնելով, պատիւ ունի ծանուցանել թէ
այն աշակերտք, որք ձրի ընդունուիլ կը
փափաքին ի Կեդրոնական վարժարան, ար-
տօնեալ են նախ քննութիւն տալ օգոստոս
4 ին, ըստ նախորդ յայտարարութեան խնա-
մակալութեանս, և ապա եթէ քննութեան
մէջ յաջողակ գտնուելով ընդունուին, դի-
մել յԱզգային Պատրիարքարան իրենց դրա-
մական անկարողութեան վկայագիրն ստա-
նալու համար. — Հետեւաբար այս կարգի
աշակերտք կը հրաւիրուին դիմել Կեդրո-
նական վարժարանն, քննութեան ընդու-
նելութեան տօմս ստանալու համար անյա-
պաղ :